

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԹԵՈՂՈՐ ՆԷՕԼԴԵԲԷ (Th. Nöldeke).

Շտրազբուրգի համալսարանի նշանաւոր արեւելագէտը՝ Թ. Նէօլդէբէն անցեալ կիսամեակի վերջին՝ մարտի երկուսին տօնեց իւր ծննդեան հօթանասնամեակը և հրաժեշտ տուաւ ուսուցչապետական ամբիոնից, որին 25 երկար տարիներ ծառայել էր:

Բազմաշխատ ուսուցչապետը ծնունդ է Համբուրգում 1836 թուի մարտի 2-ին: Գեօթինգէնի համալսարանում նաստվորեց աստուածաբանութիւն և լեզուաբանութիւն, եղել է նաև Վէննայի, Լայպցնի և Բերլինի համալսարաններում, որից յետոյ նա 1861-ին սկսեց դասախօսել Գեօթինգէնում: 1868 հրաւիրուեցաւ Քիլ աստուածաբանութեան ուսուցչապետ. իսկ 1872 սկսած գործեց նա Եռանդով իբր սեմական լեզուների ուսուցչապետ Շտրազբուրգի համալսարանում: Երկար կը լինէր թուել այստեղ այն բազմաբովանդակ և բազմապիսի երկասիրութիւնների շարքը, որը նրան համբաւաւոր և հեղինակաւոր դարձրեց Եւրոպայի արեւելագէտների շրջանում: Այնպէս որ ուսուցչապետի մեծ նշանակութիւնը նորանում է կայանում, որ նա իւր լուրջ ու խոր ուսումնասիրութեամբ ընդհանրապէս արեւելեան և մասնաւորապէս սեմական լեզուներում յայտնագործեց այնպիսի սահմաններ, որոնք լեզուագիտութեան և աստուածաբանութեան՝ այսինքն հին կտակարանի ուսումնասիրութեան համար թանկագին գիւտեր դարձան: Նա էր որ խորայնական ազգի և կրօնի պատմութեան ուսումնասիրութեան համար գերման աստուածաբաններին առանձին եռանդով յանձնարարում էր սեմական լեզուների՝ եբրայեցերէնի, արաբերէնի, արամայերէնի և ասորերէնի, հմտութիւնը. և այսօր Գերմանիայում համարեա չկայ մի սեմագէտ—արեւելագէտ կամ հին կտակարանով զբաղուող աստուածաբան, որ իրեն ուսուցչապետ Նէօլդէբէի աշակերտ չհամարի: Նա ունեցել է նաև հայ ունիդերներ: Նորա ուսումնասիրութիւնները Սասանեանների վերաբերմամբ առանձին նշանակութիւն ունին մեր պատմութեան ժամանակագրութիւնը ճշտելու: Ուսուցչապետ Նէօլդէբէն Շտրազբուրգի համալսարանի փառք ու պատիւն էր. Գերմանիայից դուրս այս համալսարանը, իբր Նէօլդէբէի համալսարան ծանօթ էր. և ահա այս համալսարանն է որ այս տարուայ մարտի 2-ից զրկւում է իւր գիտութեան ամենալուսաւոր շահիցը:

Շտրասբուրգ.

ՄԻՍԱԿ ԽՈՍՏԻԿԵԱՆ